ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/6509/02/24

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

16 օգոստոսի 2024թ | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ ԲՄԱՊՁԲ-23-9/3-1 պայմանագիրը միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. օգոստոսի 7-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ ԲՄԱՊՁԲ-23-9/3-1 պայմանագիրը միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2024թ. օգոստոսի 12-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. օգոստոսի 13-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԱՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ ԲՄԱՊՁԲ-23-9/3-1 պայմանագիրը միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Թիվ ԵԴ2/6509/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. սեպտեմբերի 27-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by
VARDANYAN GRIGORI

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am